ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/165

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.11.2018թ. թիվ 27/26-3/20020-18 գրությամբ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 26.10.2018թ. թիվ 20/666 գրության հիման վրա, 03.11.2018թ. թիվ 27/26-3/20020-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար համակարգիչների, տպիչների և օժանդակ սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱԱԾ-ԿԿՏՎ-ԷԱՃ-3/18» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ՝ Աճուրդ) և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Աճուրդի 26-րդ չափաբաժնի մասով:

Աճուրդի 26-րդ չափաբաժնով նախատեսված էր գնել 1 հատ ֆայլային սերվերներ, հետևյալ բնութագրով՝ «Տվյալների արխիվացման երիզային սարք, արտաքին, մաքսիմալ հիշողության ծավալը 360 ՏԲ, տվյալների պահպանման սարքերի սլոտների քանակը 24, ինտերֆեյսը Fibre Channel, ինտերֆեյսի արագությունը 8 Գբ/վ, տվյալների փոխանցման արագությունը 2.16 ՏԲ/ժ, տվյալների ապարատային ծածկագրում AES-256 բիթ, հեռակառավարում վեբ ինտերֆեյսի միջոցով, 12Gb 2-պորտ սմարտ կոնտրոլլեր, արտաքին սարքերի հետ կապի մալուխ, 4 հատ 15 ՏԲ տվյալների պահպանման երիզային քարթրիջ, երաշխիքային և սպասարկման ժամկետը 3 տարի»:

Փաստացի տվյալ ապրանքը բաղկացած է 4 տարբեր ապրանքներից՝ արխիվացման երիզային սարք, կոնտրոլլեր, կապի մալուխ, երիզային քարթրիջ: Ակնհայտ է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքը հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, կատարված չէ, քանի որ նշված չէ այդ բաղադրիչների համատեղելիության պահանջը: Նույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը թույլ են տալիս հստակեցնել բնութագրերը:

Գնով 1-ին տեղ զբաղեցնելուց հետո Ընկերությունը ներկայացրել է հետևյալ բնութագիրը՝ «Տվյալների արխիվացման երիզային սարք HPE StoreEver LTO-7 Ultrium 15000 External Tape Drive, արտաքին, մաքսիմալ հիշողության ծավալը 360 ՏԲ, տվյալների պահպանման սարքերի սլոտների քանակը 24, ինտերֆեյսը Fibre Channel, ինտերֆեյսի արագությունը 8 Գբ/վ, տվյալների փոխանցման արագությունը 2.16 ՏԲ/ժ, տվյալների

ապարատային ծածկագրում AES-256 բիթ, հեռակառավարում վեբ ինտերֆեյսի միջոցով, 12Gb 2-պորտ սմարտ կոնտրոլլեր HP H240 Int Smart Host Bus Adapter, արտաքին սարքերի հետ կապի մալուխ Norco StorageWorks Mini-SAS, 4 հատ 15 ՏԲ տվյալների պահպանման երիզային քարթրիջ Quantum Data Cartridge, երաշխիքային և սպասարկման ժամկետը 3 տարի»:

Այս բնութագիրը արժանացել է մերժման այն պատճառաբանությամբ, որ նշված բաղադրիչները անհամատեղելի են, քանի որ տարբեր արտադրողների են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն գործընթացին մասնակցելուց չի ունեցել որևէ խախտում: Ըմբռնումով մոտենալով պատվիրատուի մտահոգությանն ապրանքի օգտագործման անհնարինության առումով, Ընկերությունը հայտնել է, որ բնութագրում սահմանված չէ համատեղելիության պահանջը, կամ առնվազն լրակազմ լինելու հանգամանքը, ինչը թույլ կտար ենթադրել, որ այն օգտագործվելու է համատեղ: Ընկերությունը գտնում է, որ գործնական լուծումը այս դեպքում, մրցույթի վերահայտարարելն է, բնութագրերը հստակ ձևակերպելով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետը սահմանում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Գնման գործընթացին մասնակցելը, որը սկսվում է մասնակցի կողմից հայտ ներկայացնելու պահից, հանդիսանում է մասնակցի իրավունքը: Միևնույն ժամանակ մասնակիցը գնման գործընթացի շրջանակներում ստանձնում է որոշակի պարտականություններ, որոնք ծագում են որոշակի փուլից հետո, մասնավորապես՝ ընթացակարգի արդյունքներով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո: Մինչև առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելը, մասնակցի կողմից իրականացվող գործողություններն ուղղված են գնումների ընթացակարգին մասնակցության իրավունքի իրացմանը, որի շրջանակներում մասնակիցը դեռևս որևէ պարտավորություն չի ստանձնում:

Հաշվի առնելով, որ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բնութագիրը չի հակասում հրավերում սահմանվածին, պատվիրատուի կողմից մերժումը Ընկերության կարծիքով չի հանդիսանում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք, ուստի Ընկերությունը գտնում է, որ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն: Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/165 ընթացակարգի շրջանակներում 08.11.2018թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.10.2018թ. թիվ 20/666 գրությամբ ներկայացրել է «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/165 ընթացակարգի շրջանակներում 08.11.2018թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2018/165 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/165 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար համակարգիչների, տպիչների և օժանդակ սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱԱԾ-ԿԿՏՎ-ԷԱՃ-3/18» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն:

2. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 25.09.2018թ. ժամը 10:10-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 7-րդ և 26-րդ չափաբաժինների մասով, որին ծանուցվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 03.10.2018թ. ժամը 10:25-ի նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետի 1.2-րդ ենթակետով արձանագրվել է անհամապատասխանություն Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական

բնութագրի մեջ. այն է՝ նշված չէ ապրանքային նշանն, արտադրողի անվանումը և ծագման երկիրը:

4. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 25.10.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի հայտը Աճուրդի 26-րդ չափաբաժնի մասով մերժվել է այն հիմնավորմամբ, որ ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.11.2018թ. թիվ 27/26-3/20020-18 գրությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 26.10.2018թ. թիվ 20/666 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Էլեկտրոնային աճուրդով (այսուհետ՝ աճուրդ) գնման հայտով և հրավերով պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրվեն աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության բնութագրերը, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում են նաև, որ առաջին տեղն զբաղեցրած ճանաչված մասնակիցը հրավերով սահմանված՝ որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է նաև իր կողմից հաստատված ապրանքների գնման դեպքում՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Կարգի 23-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Որոշման 24-րդ կետը սահմանում է, որ արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԱԱԾ-ԿԿՏՎ-ԷԱՃ-3/18» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

Աճուրդի հրավերով 26-րդ չափաբաժնի համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

26	ֆայլային սերվերներ	Տվյալների արխիվացման երիզային սարք, արտաքին, մաքսիմալ հիշողության ծավալը 360 ՏԲ, տվյալների պահպանման սարքերի սլոտների քանակը 24, ինտերֆեյսը Fibre Channel, ինտերֆեյսի արագությունը 8 Գբ/վ, տվյալների փոխանցման արագությունը 2.16 ՏԲ/ժ, տվայլների ապարատային ծածկագրում AES-256 բիթ, հեռակառավարում վեբ ինտերֆեյսի միջոցով, 12Gb 2-պորտ սմարտ կոնտրոլլեր, արտաքին սարքերի հետ կապի մալուխ, 4 հատ 15 ՏԲ տվյալների պահպանման երիզային քարթրիջ, երաշխիքային և սպասարկման ժամկետը 3 տարի	հատ

Աճուրդին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել (այդ թվում՝ 26-րդ չափաբաժնի մասով) «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ԱԱԾ-ԿԿՏՎ-ԷԱՃ-3/18-Համակարգիչներ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով սույն դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ԱԱԾ-ԿԿՏՎ-ԷԱՃ-3/18-Համակարգիչներ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 25.09.2018թ. ժամը 10:10-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 7-րդ և 26-րդ չափաբաժինների մասով, որին ծանուցել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընկերության կողմից ներկայացվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Միևնույն ժամանակ Աճուրդի գնահատող հանձնաժողովի 03.10.2018թ. ժամը 10:25-ի նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետի 1.2-րդ ենթակետով արձանագրվել է անհամապատասխանություն Ընկերության կողմից 26-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրի մեջ. այն է՝ նշված չէ ապրանքային նշանն, արտադրողի անվանումը և ծագման երկիրը:

Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից որպես շտկված տարբերակ ներկայացվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	Անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը	Տեխնիկական բնութագիրը
26	ֆայլային սերվերներ	HP, Norco, Quontum	HP, Norco Technologies, Quantum	ՉԺՀ	Տվյալների արխիվացման երիզային սարք HPE StoreEver LTO-7 Ultrium 15 000 External Tape Drive, արտաքին, մաքսիմալ հիշողության ծավալը 360 ՏԲ, տվյալների պահպանման սարքերի սլոտների քանակը 24, ինտերֆեյսը Fibre Channel, ինտերֆեյսի արագությունը 8 Գբ/վ, տվյալների փոխանցման արագությունը 2.16 ՏԲ/ժ, տվյալների ապարատային ծածկագրում AES-256 բիթ, հեռակառավարում վեբ ինտերֆեյսի միջոցով, 12Gb 2-պորտ սմարտ կոնտրոլլեր HP H240 Int Smart Host Bus Adopter, արտաքին սարքերի հետ կապի մալուխ Norco StorageWorks Mini-SAS, 4 հատ 15 ՏԲ տվյալների պահպանման երիզային քարթրիջ Quantum Data Cartridge, երաշխիքային և սպասարկման ժամկետը 3 տարի

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 25.10.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի հայտը Աճուրդի 26-րդ չափաբաժնի մասով մերժվել է այն հիմնավորմամբ, որ ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ «Quantum Data Cartridge» մոդելի 4 հատ 15 ՏԲ տվյալների պահպանման երիզային քարթրիջներն անհամատեղելի են «HPE StoreEver LTO-7 Ultrium 15 000 External

Tape Drive» մոդելի տվյալների արխիվացման երիզային սարքի հետ: Անհամատեղելիության արդյունքում ֆայլային սերվերները չեն աշխատելու:

Ուսումնասիրելով «ՀՀ ԱԱԾ-ԿԿՏՎ-ԷԱՃ-3/18-Համակարգիչներ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով 26-րդ չափաբաժնի համար նախատեսված տեխնիկական բնութագիրը և Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրն, արձանագրում եմ հետևյալը.

Հրավերով հաստատված տեխնիկական բնութագիր	«Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիր
Տվյալների արխիվացման երիզային սարք, արտաքին, մաքսիմալ հիշողության ծավալը 360 ՏԲ, տվյալների պահպանման սարքերի սլոտների քանակը 24, ինտերֆեյսը Fibre Channel, ինտերֆեյսի արագությունը 8 Գբ/վ, տվյալների փոխանցման արագությունը 2.16 ՏԲ/ժ, տվայլների ապարատային ծածկագրում AES-256 բիթ, հեռակառավարում վեբ ինտերֆեյսի միջոցով, 12Gb 2-պորտ սմարտ կոնտրոլլեր, արտաքին սարքերի հետ կապի մալուխ, 4 հատ 15 ՏԲ տվյալների պահպանման երիզային քարթրիջ, երաշխիքային և սպասարկման ժամկետը 3 տարի	Տվյալների արխիվացման երիզային սարք HPE StoreEver LTO-7 Ultrium 15 000 External Tape Drive, արտաքին, մաքսիմալ հիշողության ծավալը 360 ՏԲ, տվյալների պահպանման սարքերի սլոտների քանակը 24, ինտերֆեյսը Fibre Channel, ինտերֆեյսի արագությունը 8 Գբ/վ, տվյալների փոխանցման արագությունը 2.16 ՏԲ/ժ, տվայլների ապարատային ծածկագրում AES-256 բիթ, հեռակառավարում վեբ ինտերֆեյսի միջոցով, 12Gb 2-պորտ սմարտ կոնտրոլլեր HP H240 Int Smart Host Bus Adopter, արտաքին սարքերի հետ կապի մալուխ Norco StorageWorks Mini-SAS, 4 հատ 15 ՏԲ տվյալների պահպանման երիզային քարթրիջ Quantum Data Cartridge, երաշխիքային և սպասարկման ժամկետը 3 տարի

Վերլուծելով Աճուրդի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագիրը, արձանագրում եմ, որ նշված տեխնիկական բնութագիրը փաստացի ներառում է չորս հատ

առանձին սարքավորում (տվյալների արխիվացման երիզային սարք, սմարտ կոնտրոլլեր, արտաքին սարքերի հետ կապի մալուխ, տվյալների պահպանման երիզային քարթրիջ) և որից յուրաքանչյուրի համար նախատեսված են համապատասխան պահանջներ: Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ նշված տեխնիկական բնութագրից պարզ չէ, որ պահանջվող սարքերը նախատեսված են որպես հավաքածու, համատեղելիությամբ որպես մեկ սարքավորում շահագործելու համար:

Նման պայմաններում համեմատելով «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից Աճուրդի 26-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը Աճուրդի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի հետ, գտնում եմ, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին, քանի որ Ընկերության կողմից ներկայացվել են «ֆայլային սերվերներ» գնման առարկայի համար նախատեսված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխանող տեխնիկական բնութագիր, իսկ տեխնիկական բնութագրում նշված չի եղել պահանջվող 4 սարքերի՝ համատեղելիությամբ աշխատելու պահանջը, ինչի հետևանքով Ընկերությունը չէր կարող կանխատեսել Պատվիրատուի կողմից առաջադրվող նման պահանջի առկայությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ուսումնասիրելով «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի «ՀՀ ԱԱԾ-ԿԿՏՎ-ԷԱՃ-3/18-Համակարգիչներ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով 26-րդ չափաբաժնի համար հրավերով սահմանված տեխնիկական բնութագիրը, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, քանի որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերով հաստատված գնման առարկայի տեխնիկական բնութագրի պահանջներին: Ուստի

գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.11.2018թ. թիվ 27/26-3/20020-18 գրությամբ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00861057) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**